ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

*Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին*

№ 14

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

*Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ*

№ 14

Ереван
Издательство ЕГУ
2018

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

# JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU*

№ 14

YEREVAN
YSU PRESS
2018

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 50-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ* ..... 11-12

## ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Մկրտումյան Գայանե*
*ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿ-ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ* ..... 14-27

*Ռաֆայելովա Քրիստինե*
*ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԱԲ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ* ..... 28-39

*Ikilikyan Sona*
*ARAB-IRANIAN RELATIONS IN THE CONTEXT OF THE PERSIAN GULF NAMING DISPUTE* ..... 40-54

## ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Ռամազյան Սամվել*
*«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ* ..... 56-94

*Հակոբյան Տաթևիկ*
*ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՄԵԼԻՄ ԴԵՐԻՆԳԻԼԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)* ..... 95-110

*Սարգսյան Տաթևիկ*
*ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՕՍՄԱՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՎԵՆ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆ* ..... 111-123

*Աբրահամյան Միհեր*
*ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ* ..... 124-137

*Պողոսյան Նաիրա*
*ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱԼԻԴԵ ԷԴԻՓ ԱԴԸՎԱՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ* ..... 138-151

*Մելքոնյան Ռուբեն*
*ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐ-ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ* ..... 152-165

*Գևորգյան Արշակ*
*ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՉԱՊԵՏ ԱԴՆԱՆ ՄԵՆԴԵՐԵՍԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՏՐԱՊԻԶՈՆՑԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ* 166-178

*Հովսեփյան Լևոն*
*ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ* 179-205

*Դարբինյան Հայկ*
*«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԶՈՒԳԱԿՑՈՒՄԸ «ԿՈՇՏ ՈՒԺԻՆ». ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶԱՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ* 206-219

*Գևորգյան Արշակ*
*«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ. ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ* 220-230

*Հովհաննիսյան Գոռ*
*ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-ԱԿԱՆՆԵՐԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ* 231-240

*Հարությունյան Ավետիք*
*2015 Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.* 241-250

*Մարգարյան Հայկ*
*ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ* 251-263

*Պետունց Արեն*
*ԱԶԳԱՅՆԱՄՈԼԱԿԱՆ ՆՈՐ ՈՒԺԻ ԲԵՄԵԼԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ* 264-278

*Մելքոնյան Մարիամ*
*ԿՆՈՋ ԷՄԱՆՍԻՊԱՅԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆԻ «ԱՂԵՐՍԱԳՐՈՒՄ»* 279-288

*Պետրոսյան Ամալյա*
*XVIII ԴԱՐԻ ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ* 289-298

*Խաչատրյան Շուշան*
*ՄՈՒԽԹԱՐ ԱՌԻԵՋՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ* 299-314

*Մովսիսյան Լիլիթ*
*ԱՐԴԻ ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ* 315-328

*Хабибуллина Элмира **
*ЛИНГВИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПЕРЕВОДОВ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ С ТАТАРСКОГО ЯЗЫКА НА ТУРЕЦКИЙ* ..... 329-335

*Քոչարյան Հայկ, Գևորգյան Աննա*
*ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՎՐԱ* ..... 336-356

## ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Vardanyan Aharon*
*SOME REMARKS ON THE SOCIOLINGUISTIC SITUATION IN XALXĀL* ..... 358-365

*Տոնոյան Արտյոմ*
*ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ ԲՈՒՆ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ* ..... 366-380

*Բիանջյան Հասմիկ*
*ՍԵՅՅԵԴ ՄՈՀԱՄՄԱԴ ԱԼԻ ՋԱՄԱԼԶԱԴԵԻ ԴԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ և 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ* ..... 381-392

*Խաչատրյան Զարուհի*
*ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՁԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ* ..... 393-402

*Դավթյան Սոնա*
*ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՈՒՍԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ* 403-419

*Կոստանյան Վահան*
*ԱՅՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼՆԵՐԸ ԵՎ ՅԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ* 420-430

*Գեղամյան Աստղիկ*
*ՍԻՐԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ* 431-440

*Պետրոսյան Լիանա*
*ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2005-2013 ԹԹ.)* 441-449

*Կոստանյան Վահան*
*ԱՅՐՈՒՄԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ* 450-456

*Брутян Ануш*
*ПЕРСПЕКТИВЫ РОССИЙСКО-ИРАНСКОГО СОТРУДНИЧЕСТВА ПОСЛЕ ПОДПИСАНИЯ СВПД* 457-471

*Khorikyan Hovhannes*
*ON THE LOCATION OF THE HEPHTHALITES* 472-486

***Կոստանյան Վահան ****

# ԱՅՐՈՒՄԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

***Բանալի բառեր՝*** *այրումներ, կացարան, տեղաբնիկ ժողովուրդներ, ծագումնաբանություն, Ադրբեջան*

Այրումները էթնիկ խումբ են, որոնց բնակեցման տարածքն ընդգրկում է Հայաստանի և Արցախի Հանրապետություններին սահմանակցող տարածքները, ադրբեջանական հանրապետության Ղազախի և Դաշքեսանի շրջանները[1]: Այրումական խմբեր են ապրում նաև Թուրքիայի Հանրապետության Իգդիրի շրջանում, Իրանի Իսլամական ՀանրապետությանՄակվի հատվածում, Վրաստանի հարավային մասում[2]: Այրումաբնակ գյուղեր են եղել նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան և Արցախի Հանրապետության արևելյան շրջաններում[3]:

Այրումները հանդիսանում են Կովկասի քիչ ուսումնասիրված հանրույթներից մեկը: Նրանց մասին՝ որպես առանձին էթնիկ խմբի, հիշատակումներ չեն պահպանվել Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարներում: Սակավ ուսումնասիրված լինելու պատճառով գիտական հանրության շրջանակում չկա միասնական կարծիք այս խմբի ծագումնաբանության վերաբերյալ: Այս առնչությամբ որոշակի եզրահանգումներ կատարելու համար կարևոր է այրումական կացարանների և կենցաղի ուսումնասիրությունը, ինչը թույլ է տալիս կատարել որոշակի օբյեկտիվ եզրահանգումներ:

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ vahan.kostanyan@ysu.am

[1] Кобычев В. П., Айрумы, Советская этнография, Москва, 1962, с. 13.

[2] Минорский В. Ф., История Ширвана и Дербенда, Москва, 1965, с. 108-113.

[3] Акты, собранные Кавказской археографической комиссией,Том 1, Тифлис, 1870, с. 597.

Այրումական կացարանները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ Pəyə, Şeşəəyluy, Şirvani կամ Balıxbeli: Դրանցից հնագույնը համարվում են հողաշեն Pəyə-ները, որոնք ունեն հարթ տանիք, ինչի պատճառով էլ տեղացիների կողմից դրանք անվանվումեն Yaştıey՝ թարգմանաբար «հարթտուն»: Սրանց հարկի տակ ժամանակին ապրում էին այրումներն իրենց ընտանի կենդանիների հետ միասին: Նրանց կեցավայրերն իրարից բաժանված են եղել մի քանի գերանների միջոցով կամ կենդանիներն ուղղակի կապվել են սրահի անկյուններից մեկում: Հետագայում այս կացարանների կառուցվածքային զարգացումը բերել է նրան, որ մեկ հարկի տակ կառուցվում էին կիրառական տարբեր նշանակություն ունեցող մի քանի խցեր, որոնց թիվն արդեն կախված էր ընտանիքի մեծությունից և բարեկեցության աստիճանից: Նման կացարաններում ընտանի կենդանիները և բնակիչները շարունակում էին օգտվել միևնույն մուտքից, որի միջոցով էլ կատարվում էր օդափոխությունը: Նման տներն աչքի չէին ընկնում իրենց ամրությամբ, իսկ հարթ տանիքն իր հերթին չէր կարողանում բնակիչներին պաշտպանել անգամ թույլ ուժգնության անձրևից: Դրանք առավելապես նախատեսված են եղել ձյունից և սառնամանիքից պաշտպանվելու համար: Հետագայում ավելի բարդ շինարարականան միավորների ի հայտ գալու հետ մեկտեղ pəyə-ն սկսում է օգտագործվել որպես ախոռ մանր և խոշոր եղջերավոր անասունների համար:

Կացարանի դեր կատարող երկրորդ՝ ավելի ուշ շրջանի կառույցները կրկին հողաշեն էին և արդեն ունեին հավասար քառանկյան տեսք: Դրան տեղացիներն անվանում էին Şeşəəyluy[4]: Դրանք առանձնանում են գետնից վեր բարձացող իրենց կոնանման տանիքներով: Այս շինությունները աչքի են ընկնում համեմատաբար ավելի բարձր դիմացկունությամբ և հարմարավետությամբ՝ գերազանցելով նաև հետագայում

[4]Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 78.

կառուցված կացարանների երրորդ տիպին: Սրանց կառուցումը սկսվում էր հողահարթեցման աշխատանքներից (ինչը որոշ դեպքերում անգամ չէր կատարվում), ապա նշագծվում էր քառակուսին, որը սովորաբար ուներ 1-1,5 մետր երկարություն և 2,5-3 մետր լայնություն, և դրան հաղորդվում էր որոշակի խորություն: Փորման աշխատանքների կատարումից հետո բոլոր կողմերում տեղադրվում էին 4-ական գերաններ հիմքն ամրացնելու համար, ապա արդեն 18 այլ գերաններ բրգաձև շարելով՝ վեր էր խոյանում կացարանը: Շինության վերնամասում շինարարը թողնում էր քառանկյուն երթիկ, որը պիտի ծառայեր օդափոխության և ծխի հեռացման համար: Շինություններում մնացած հողային զանգվածը դուրս էր բերվում, ոչ թե բացված դռնից, այլ բահերով դուրս էր նետվում տանիքին բացված պատուհանից: Տանիքի հողով պատվելու արդյունքում կացարանը, որն արտաքինից փոքր հողաթումբ էր հիշեցնում, դառնում էր էլ ավելի ջերմակայուն:

Կացարանների երրորդ խումբն իր տեսքով նման է առաջին խմբին՝ տարբերությամբ, որ ունեն ոչ թե pəyə-ին հատուկ հարթ տանիք, այլ՝ բրգաձև: Սրանք տեղացիներն անվանում են Şirvani կամ Balıxbeli (թարգմանաբար՝ ձկան մեջք): Կացարանի այս տեսակը, չնայած ավելի ուշ հայտնվելուն, չի գերազանցում նախորդներին իր հարմարավետությամբ և դիմացկունությամբ: Այն չի համապատասխանում այրումների կենսակերպին և իրենց կենցաղավարման ոճին: Նման կացարանների ի հայտ գալը բացատրվում է դրանց շինարարական գործընթացում նյութական և մարդկային պակաս ռեսուրսների ներգրավմամբ:

Բոլոր երեք տեսակի հողաշեն այս կառույցները ունեն ելք ոչ թե անմիջապես բակ, այլ մի նեղ երկար միջանցք, որը ծածկված է ծառերի ճյուղերով, և տեղացիներն այն անվանում են Çardax[5]: Հարկ է նշել, որ տնտեսության զարգացման արդյունքում այրումական ընտանիքի բուն կենսատարածքը, նրանց կենցաղավարման պայմանները և կենդանիների ախոռատեղին առանձնացվեցին

[5] Նույն տեղում էջ 80.

իրարից, ինչը թույլ տվեց լուծել ոչ միայն առողջական-սանիտարական, այլև մշակութային մի շարք հարցեր: Մասնավորապես այն հանգամանքը, որ նախկինում մանկահասակ երեխաները ակամա ականատես էին դառնում կենդանիների բազմացման, ծննդաբերության և այլ ակտերի, ինչն իր անդրադարձն էր գտնում նրանց՝ սեփական վարքագծի զանազան դրսևորումների մեջ: Սակայն անգամ նման փոփոխությունները մեծապես չփոխեցին այրումների կենցաղը: Բոլոր երեք տիպի կացարանները չէին երաշխավորում դրանց բնակիչների պաշտպանվածությունը տեղումնառատ եղանակից և զանազան հիվանդություններից: Անձրևային եղանակի ժամանակ դրանցում ապրելը անհնարին էր դառնում. տանիքը կաթում էր, իսկ պատերը ժամանակի ընթացքում դանդաղորեն փլուզվում էին:

Այրումների կողմից կառուցված այս տները աչքի են ընկնում իրենց պարզությամբ և ավելի շատ հիշեցնում էին քարանձավներ: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել Ղարաքաշլիի կողմից գրի առնված «айрум, который живет в айруме» արտահայտությունը[6], որում հիշատակված երկրորդ այրում բառի հիմքում ընկած է հայերեն այր, քարայր բառը:

Այրումական գյուղերում 20-րդ դարի սկզբում կատարված գիտարշավների ընթացքում գրանցվել են նաև բարդ քարաշեն տների օրինակներ, որոնք բոլորն անխտիր, տեղացիների վկայությամբ, կառուցված են եղել հարևանությամբ ապրող հայ արհեստավորների կողմից: Այս կառույցները տեղացիների կողմից ստացել են otağ անվանումը: Դրանք ունեին կամ բրգաձև, կամ հարթ տանիք: Նման կառույցները կազմում էին այրումական գյուղական բնակարանային ֆոնդի 2-3%-ը: Պետք է նշել, որ ոչ միայն բնակարանային ֆոնդի պարագայում, այլև գյուղատնտեսական և կենցաղային իրերի առումով, այրումները

[66] Каракашли К., Об айрумах, Издание Общества Облседования и Изучения Азербайджана, Бакы, 1929, с. 26.

որակյալ գործիքներ ձեռք բերելու համար մշտապես դիմել են հարևանությամբ ապրող հայերին:

Ալեկբերովի կողմից կատարված գիտարշավի արձանագրած արդյունքների համաձայն՝ զուտ այրումական ծագում ունեցող կացարանները կոչվում են «ղարադամ», որտեղ «ղարա» բառային մասնիկը հեղինակը ստուգաբանում է ոչ թե որպես «սև», այլ «պարզ, պրիմիտիվ»[7]: Այս կացարանի նկարագրությունը ի մեծի մասամբ համընկնում է Ղարաքաշլիի կողմից նկարագրված կացարանների երկրորդ տիպին: Հեղինակի հետազոտության համաձայն՝ այրումներն իրենց կացարանները կառուցում էին լեռների արևկող շրջանում, ջրային որևէ ավազանի մոտակայքում: Ղարադամի դուռը նայում էր դեպի հարավ կամ հարավ-արևմուտք: Այսպիսի կացարանների կառուցումը, հաշվի առնելով շինարարական տեխնիկան, կարող էր հատուկ լինել միայն նստակյաց կյանքի խորը ավանդույթներ ունեցող ժողովրդին, ինչն էլ հակափաստարկ է հանդիսանում այն տեսությանը, համաձայն որի՝ այրումները օղուզական ցեղերի հետնորդներ են: Նման կացարանների նախնական զարգացման արեալ համարվում են անտառային շրջանները՝ մասնավորապես տեղայնացնելով այն Ղարաբաղի և Գանձակի շրջակայքում: Հաշվի առնելով, որ այրումների՝ հայ-հոռոմներից ծագման վարկածը բավականին ծանրակշիռ է, թույլ կտանք մեզ ենթադրել, որ այս բնակավայրերի նախնական զարգացման արեալ կարող է հանդիսացած լինել նաև ներկայիս ՀՀ Տավուշի մարզի անտառային շրջանները:

Այս կացարանների հիմնական առանձնահատկությունը համարվում է դրանց տանիքը: Կացարանի կառուցումը սկսվում է ոչ թե հիմքի և պատերի կառուցումից, այլ հարթ տարածության վրա դրա տանիքի ամրացումից: Տանիքի կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն բաղկացած է մեկը մյուսի վրա բարձրացող 4 խորանարդներից, որոնցից յուրաքանչյուրն ունի հստակ չափսեր, որոնց պահպանումն էր երաշխավորում կացարանի հարաբերական ամրությունը:

[77]Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 77

Առանձնահատուկ պետք է նշել, որ հեռվից այս կացարանները և այրումական գերեզմանները շատ բարդ է տարբերել մեկը մյուսից, եթե դրանք դիտարկել հյուսիսային ուղղությունից, որտեղից չի երևում կացարանների դուռը: Կացարաններ հիշեցնող նման գերեզմանները հատուկ են եղել միայն բազմադարյա նստակյաց կյանք վարած ժողովուրդներին, որոնք ձգտում էին ստեղծել նույն հարմարավետ պայմանները հանգուցյալի համար նաև մահվանից հետո: Եվ այդ իսկ պատճառով նրանց հուղարկավորում էին կացարաններ հիշեցնող գերեզմաններում, ուր, ի դեպ, հանգուցյալին մտցնում էին դռնից, այլ ոչ թե իջեցնում վերևից: Թաղման նման ծեսի ու գերեզմանների տեսքը, ևս մեկ ապացույց է, որ այրումները հանդիսանում են տեղաբնիկ ժողովուրդ: Այսօր նմանօրինակ գերեզմաններ են պահպանվել ադրբեջանական հանրապետության տարածքում գտնվող Խաշբուլախ գյուղում: Հարկ է նշել, որ այսպիսի մի գերեզմանատուն էլ պահպանվել է այսօր հայկական Բաղանիս և Ոսկեպար գյուղերի՝ Ադրբեջանի հետ սահմանակցող գոտում[8]: Դրանց՝ ադրբեջանական կրակի տակ գտնվելու փաստը դժվարեցնում է վերջիններիս ստույգ ուսումնասիրությունը, սակայն տեղացիների նկարագրությունները համապատասխանում են Խաշբուլախի գերեզմանների՝ մեզ հասած նկարներին:

Ամփոփելով կարող ենք նշել, որ այրումական կացարանների կառուցվածքի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ի դեմս այրումների՝ գործ ունենք նստակյաց կյանքի ավանդույթ ունեցող էթնիկ միավորի հետ, ինչն ուղղակիորեն ապացուցում է, որ թյուր է այրումական ծագումնաբանության օղուզական վարկածը[9]:

[8] Դաշտային աշխատանք:

[9] Велиев М. Г. (Бахарлы). Азербайджан (Физико-географический, этнографический и экономический очерк), Баку, 1921, с. 36.

## ОПИСАНИЕ АЙРУМСКОГО ЖИЛЬЯ

**Костанян Ваган**

**(Резюме)**

Айрумы-этническая группа, представителями которого населены ареалы в Иране, Азербайджане, Турции и Грузии. Нужно отметит, что до распада Советсого Союза айруманаселенные пункты былу и на територии нынешней Республики Армения. Одним из методов выяснения этногенеза айрумов является иследования айрумского жилья, которые делятья на 3 группы. Анализ этих конструкций показывает, что мы имеет дело не с кочевниками и версия тюркского произхождения айрумов отрицается.

## OVERVIEW OF AYRUM HABITATION

**Kostanyan Vahan**

**(Summary)**

Ayrums are an ethnic group located in Azerbaijan, Iran, Turkey and Georgia, There were villages populated with Ayrums in the territory of the Republic of Armenia before the collapse of Soviet Union. One of the methods of study of ethnogenesis of Ayrums is the research of Ayrum habitation, which could be devided into 3 groups Pəyə, Şeşəəyluy, Şirvani or Balıxbeli. The study of constructions clearly proves, that Ayrums could not be nomad tribe and consequently the version of Turkic origins of Ayrums could not be proved.